ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

EUROPEAN
UNIVERSITY

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

9

ԵՐԵՎԱՆ
2018

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Ե 744

Գլխավոր խմբագիր՝
Բիշարյան Հեղինե, մանկավարժական գիտ. թեկնածու

Խմբագրական խորհուրդ
Գևորգյան Հ. Զ., ֆիզ-մաթ գիտ. թեկնածու, դոցենտ
Խաչատրյան Ա. Հ., իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աբրահամյան Հ. Մ., պատմագիտության դոկտոր
Վահանյան Գ. Ա., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ճուղուրյան Ա.Գ., տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Կիրակոսյան Ն.Լ., տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Նալչաջյան Կ. Ա., հոգեբանական գիտ. թեկնածու, դոցենտ
Մանուկյան Ա. Գ. մանկավարժական գիտ. թեկնածու, ասիստենտ
Մանասյան Գ. Ս., աշխարհագրական գիտ. թեկնածու, դոցենտ
Ղարսլյան Է. Վ., տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Մելիքյան Վ. Շ., տեխնիկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Հայրապետյան Վ. Ժ., ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Աստվածատրյան Ա. Վ., բժշկական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Քրիստոֆ Կրեյտց, ինֆորմատիկայի դոկտոր, պրոֆեսոր

Ե 744 **Եվրոպական համալսարան:** Գիտ. հոդվածների ժող./ ԵՀ.
Գլխ. խմբ.՝ Հ. Բիշարյան,– Եր.: «ԵՀ» հրատ., 2018: Գիրք 9 - 448 էջ:

Ժողովածուն ընդգրկում է տնտեսագիտության, կառավարման, իրավագիտության, մանկավարժության, լեզվաբանության, քաղաքագիտության, պատմության, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի, զբոսաշրջության տարբեր ոլորտների հրատապ խնդիրների վերլուծությանը նվիրված հոդվածներ: Ներկայացված հետազոտությունների արդյունքները կարող են օգտակար լինել համապատասխան բնագավառներում զբաղված մասնագետների, ասպիրանտների, հայցորդների, ինչպես նաև գիտության նորագույն նվաճումներով հետաքրքրվող անձանց:

ЕВРОПЕЙСКИЙ УНИВЕРСИТЕТ: СБОРНИК НАУЧНЫХ ТРУДОВ
EUROPEAN UNIVERSITY: COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ISBN 978-99941-2-609-5

© Եվրոպական համալսարանի հրատարակչություն, 2018
© Publishing of European University, 2018

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԴԵՐԸ ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Միեր Ֆրանգուլյան
ԵՀ, Տնտեսագիտության և կառավարման ամբիոն, հայցորդ
mherfrangulyan1987@gmail.com, +374 77 376850

ՀՀ-ում հարկային քաղաքականության արդյունավետությունը ուղղակիորեն կախված է ՀՀ-ում ստվերային տնտեսության կրճատման հետ: Այս տեսանկյունից ՀՀ հարկային համակարգը կարիք ունի որակյալ և բարձր մասնագիտական պատրաստվածություն ունեցող կադրերի, ինչպես կառավարման ստորին, այնպես էլ բարձր հարթություններում: Ավելին, այս նպատակի իրականացման համար անհրաժեշտ է ձևավորել հարկային ծառայողների գնահատման ճկուն և արդյունավետ համակարգ, որը հնարավորություն կտա գնահատել հարկային մարմնի կողմից իրականացվող յուրաքանչյուր գործառույթի և մեթոդի արդյունավետությունը: Միայն հարկահավաքմանը ուղղված գործառույթների անաչառ ու օբյեկտիվ գնահատման շնորհիվ կարելի է բացահայտել այն բոլոր խոչընդոտներն ու հնարավորությունները, որոնք առկա են հարկային քաղաքականության բնագավառում, և մշակել միջոցառումներ բացասական երևույթների վերացման և հարկային քաղաքականության առաքելության իրականացման ուղղությամբ:

Հիմնաբառեր. *հարկային քաղաքականություն, հարկային մարմին, հարկային եկամուտներ, հարկային ծառայողներ, գնահատման համակարգ, ստվերային տնտեսություն, հարկային քաղաքականության արդյունավետություն*

Գաղտնիք չէ, որ ցանկացած պետության տնտեսական քաղաքականության կարևորագույն բաղկացուցիչներից մեկը հարկային քաղաքականությունն է, որը առանձնահատուկ նշանակություն ունի հատկապես ՀՀ-ում: Դա բացատրվում է նրանով, որ ՀՀ-ում պետական բյուջեի եկամուտների գրեթե 95%-ը ապահովվում է հարկային եկամուտների միջոցով: Թերևս սա է պատճառը, որ հարկային քաղաքականությունը ՀՀ-ում կապվում է հարկերի դրույքաչափերի ու հարկային հսկողության գործիքակազմի հետ: Արդյունքում անտեսվում են հարկային մարմնի գործառույթների գնահատման հարցերը և ձևա-

վորվում է համակարգ, որտեղ հարկային եկամուտների ապահովման նպատակը արդարացնում է բոլոր միջոցները, որոնք կիրառվում են այդ նպատակին հասնելու համար: Թվում է, թե ամեն ինչ արվում է հարկային եկամուտների ապահովման համար, սակայն դրան ուղղված գործառույթները համարժեք գնահատական չեն ստանում:

Հարկային մարմնի գործառույթների գնահատումը կարևորագույն հիմնախնդիր է, որի լուծման արդյունավետ տարբերակների որոնմամբ էլ պայմանավորված է հիմնախնդրի հրատապությունն ու այժմեականությունը:

Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ-ում պետական բյուջեի եկամուտների կառուցվածքում գերակշիռ բաժինը ընկնում է հարկային եկամուտներին և դրանց ապահովումը ավելին քան կարևոր է պետության գործառույթների լիարժեք իրականացման համար, այնուամենայնիվ, այդ եկամուտների հավաքագրումը արդյունավետ չի լինի, եթե հարկային քաղաքականություն իրականացնող մարմնի գործառույթները համապատասխան գնահատական չստանան: Այլ կերպ ասած, եթե հարկային մարմնի կողմից պարբերաբար չեն գնահատվում այն մեթոդներն ու մեխանիզմները, որոնք կիրառվում են հարկային եկամուտների հավաքագրման առաքելության իրականացման նպատակով, ապա հնարավոր չէ բացահայտել հարկահավաքմանը ուղղված գործառույթներում առկա թերություններն ու բացթողումները և կատարելագործել հարկային համակարգը: Ավելին, համապատասխան գնահատականի չարժանացած գործառույթը, որն իրականացվում է թերություններով, ժամանակի ընթացքում դառնում է սովորություն և կրում ձևական բնույթ: Համարժեք գնահատականի չարժանացած գործառույթների շարունակաբար իրականացումը ի վերջո ստեղծում է իրավիճակ, երբ այդ գործառույթների իրականացումը հանդիսանում է համատարած դժգոհությունների առիթ, իսկ դրանց կիրառումից հավելյալ արժեք չի ստեղծվում: Ի վերջո տպավորություն է ստեղծվում, թե հարկային մարմինը «կաշվից դուրս է գալիս» հարկային եկամուտների ապահովման ուղղությամբ, սակայն իրականում ոչինչ չի արվում, քանզի հարկային եկամուտների աճը արձանագրվում է միայն գերավճարների և հավելավճարների օգնությամբ: Այս իրավիճակի ապացույցը ակնհայտ է և այն կարելի է հստակ արձանագրել հարկային եկամուտների հավաքագրման, տնտեսվարողների կողմից

հայտարարագրած շրջանառության և հարկ վճարողների գերավճարների դինամիկան ըստ տարիների ուսումնասիրելիս: Ավելին, այս իրավիճակը փակուղային է և ոչ միայն չի նպաստում ստվերային տնտեսության կրճատմանը, այլև լրացուցիչ հիմքեր է ստեղծում ստվերի մեծացման ու հասարակական դժգոհությունների ձևավորման համար: Սա հիմնախնդիր է, քանի որ ստվերային տնտեսության գոյությունն ու շարունակական աճը պետությանը հնարավորություն չեն տալիս պլանավորել հարկայի բեռի նվազեցում և փոքր բիզնեսի լիարժեք աջակցություն: Ավելին, ստվերային տնտեսության կրճատմանն ուղղված շարունակական հարկային հսկողությունների արդյունքում շատ հաճախ տուժում են փոքր բիզնեսի ներկայացուցիչները, ինչը հանգեցնում է փոքր բիզնեսի կրճատմանն ու արտագաղթի աճին:

Այս հիմնախնդրի լուծման ուղիներից մեկը հարկային մարմնի գործառույթների արդյունավետ գնահատումն է: Այլ կերպ ասած, անհրաժեշտություն կա գնահատել ինչպես հարկային մարմնի գործառույթների իրականացման նպատակով կիրառվող մեթոդների ու մեխանիզմների արդյունավետությունը, այնպես էլ մշակել գնահատման արդարացի մեթոդներ հարկային ծառայողների կողմից իրենց վերապահված գործառույթների իրականացման գնահատման համար: Ընդ որում, գնահատման այդ մեթոդների մշակման ժամանակ պետք է ուշադրություն դարձնել ոչ միայն քանակային, այլև որակական ցուցանիշներին՝ ձևավորելով գնահատման ճկուն և արդարացի համակարգ: Գնահատման համակարգի ձևավորումը նպատակ պետք է ունենա ստեղծել հարկային մարմնի գործառույթների իրականացման գնահատման գործիքակազմ, որը հնարավորություն կտա բացահայտելու այդ գործառույթների իրականացման ընթացքում առկա բացթողումները, վերլուծել կիրառվող մեթոդների արդյունավետությունը, հարկային ծառայողների մասնագիտական պատրաստվածությունը, նրանց կողմից կատարվող աշխատանքների արդյունավետությունն ու արտադրողականությունը և այլն: Նմանատիպ այլ ցուցանիշների պարբերաբար ուսումնասիրության և վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, թե հարկային մարմնի այս կամ այն գործառույթի իրականացումը ի՞նչքան հավելյալ արժեք է ստեղծում, ո՞րքանով է այն արդյունավետ կիրառել, ո՞րքան է այն նպաստում ստվերային տնտեսության կրճատմանը և այլն: Ցուցանիշների հաշվարկման միջոցով բա-

ցահայտելով հարկային մարմնի գործառույթների իրականացման ժամանակ առկա բացթողումներն ու թերությունները՝ հարկային մարմինը պետք է պարբերաբար մշակի նոր մեթոդներ ու մեխանիզմներ կամ վերափոխի արդեն իսկ մշակված մեթոդները, որպեզի դրանք միտված լինեն աշխատանքի արտադրողականության և արդյունավետության բարձրացմանը: Այլ կերպ ասած, հարկային մարմնի գործառույթների գնահատում ասելով պետք է հասկանալ ցուցանիշների այնպիսի համակարգի ձևավորումը, որը պայմաններ կստեղծի ուսումնասիրելու և արձանագրելու բոլոր հնարավորություններն ու խոչընդոտները, որոնք առկա են հարկային եկամուտների հավաքագրման գործում: Ձևավորված ցուցանիշների համակարգը հստակ պատկերացում պետք է տա աշխատանքի արտադրողականության, դրա որակի և արդյունավետության, հարկային եկամուտների հավաքագրմանը դրանց մասնակցության աստիճանի և այլ ուղղությունների մասին: Պետք է բացահայտվեն բոլոր այն խոչընդոտներն ու մեթոդական բացթողումները, որոնք խանգարում են ստվերային տնտեսության վերացմանը, և պետք է ձեռնարկվեն միջոցառումներ այդ մեթոդների վերանայման ու նոր մեթոդների մշակման ուղղությամբ: Այս առումով հարկային մարմնի գործառույթների արդյունավետ գնահատումը կարևորագույն դեր ունի հարկային քաղաքականության իրականացման գործում: Քանզի ստվերային տնտեսության կրճատմանն ուղղված գործառույթների գնահատումը, հնարավորություն կտա բարձրացնել դրանց կատարման արդյունավետությունը, ինչը ուղղակիորեն կհանգեցնի ստվերային տնտեսության կրճատմանը: Իսկ քանի որ ստվերային տնտեսության կրճատումն իր հերթին կապահովի հարկային եկամուտների անհամեմատ աճ, որը հանդիսանում է հարկային քաղաքականության առաքելությունը, ապա կարելի է եզրակացնել, որ հարկային մարմնի գործառույթների գնահատման արդյունավետ համակարգի ձևավորումը կարևոր դեր է խաղում հենց հարկային քաղաքականության իրականացման մեջ: Ահա թե ինչու հարկային մարմնի գնահատման արդյունավետ համակարգի ձևավորումը ժամանակի հրամայական է և կարևորագույն մարտահրավեր ՀՀ հարկային համակարգի հետագա գործունեության համար:

ՀՀ հարկային մարմինը իր պատմության ընթացքում մշակել է մի շարք գնահատման մեխանիզմներ, սակայն դրանք հիմնականում

ուղղված են եղել հարկային ծառայողների պարգևատրմանը[3] կամ հարկային եկամուտների ապահովմանը, որի արդյունքներով իրականացվել են կառուցվածքային փոփոխություններ: Այլ կերպ ասած, ընդհանուր առմամբ, հարկային մարմնի կողմից մշակված գնահատման մեխանիզմներով հաշվարկվել է առանձին ստորաբաժանումների կողմից ապահովված ցուցանիշների համապատասխանությունը հարկային մարմնի վերադաս ստորաբաժանումների կողմից պլանավորված ցուցանիշների հետ: Մասնավորապես, այդ մեխանիզմներում

ուշադրության կենտրոնում հիմնականում եղել են հարկային եկամուտների հավաքագրման և հարկային մարմնի կողմից իրականացված ստուգումների քանակական ցուցանիշները, հաշվարկվել է դրանց կատարման հարաբերական ցուցանիշը պլանավորված ցուցանիշի նկատմամբ տոկոսով: Այլ կերպ ասած, գնահատման մեխանիզմները միտված են եղել քանակական ցուցանիշների հաշվարկմանը: Այս առումով, գնահատման այդ մեխանիզմներում բացակայել է որակական ցուցանիշների հաշվարկը, ինչի արդյունքում չի գնահատվել հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ապահովված ցուցանիշների կապը ստվերային տնտեսության կրճատման հետ: Չի ուսումնասիրվել այդ ցուցանիշների ձեռքբերման համար կիրառվող մեթոդների արդյունավետությունն ու հարկային ծառայողների ներդրած ջանքերը: Հաշվի չեն առնվել նաև այդ ցուցանիշների ապահովման ընթացքում աշխատանքի արտադրողականության և գործառույթների կատարման արդյունավետության գնահատման գործոնները: Բնական է նաև, որ այդպիսի գնահատման մեխանիզմների կիրառման արդյունքում, հնարավոր չի եղել անգամ տեղեկատվություն հավաքել հարկային ծառայողների մասնագիտական պատրաստվածության և պրոֆեսիոնալիզմի մասին: Եվ պատահական չէ, որ հարկային մարմնի կողմից կազմակերպված կառուցվածքային փոփոխությունները և դրանց արդյունքում հարկային ծառայողների կրճատումները կրել են տարերային և սուբյեկտիվ բնույթ և չեն ունեցել ցուցանիշային հիմք: Արդյունքում հարկային մարմնում աշխատող

[3] ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 27.06.2016թ.-ի 97-Ա հրամանը «ՀՀ ԿԱ ՊԵԿ զարգացման և խրախուսման ֆոնդի միջոցների հաշվին պարգևատրման գումարների բաշխման նպատակով հարկային (տարածքային) տեսչությունների աշխատանքների գնահատման ցուցանիշները և կարգը հաստատելու մասին»

անձնակազմի մի մասը, չնայած այն հանգամանքին, որ չուներ մասնագիտական պատրաստվածություն, շարունակել է աշխատանքը, այն պարագայում, երբ աշխատանքից ազատվել են մասնագիտական բարձր պատրաստվածություն ունեցող աշխատողներ: Եվ ահա նմանատիպ իրավիճակը իր ազդեցությունն է ունեցել հարկային քաղաքականության վրա այն առումով, որ մի կողմից մասնագիտական համապատասխան պատրաստվածություն չունեցող աշխատակիցները ունակ չեն պայքարել ստվերային տնտեսության կրճատման դեմ, իսկ մյուս կողմից, չունենալով համապատասխան որակավորման կադրեր, հարկային մարմինը շարունակել է իր որդեգրած մեթոդների կիրառումը և չի իրականացրել գործառույթերի համապատասխան գնահատում: Սրա վառ ապացույցներից է 2011թ. ՀՀ կառավարության կողմից ընդունված աշխատանքային ծրագրերի կազմման և կատարողականի գնահատման վերաբերյալ որոշման փաստացի իրականացումը: Մասնավորապես, չնայած այդ որոշման հիմքում նույնպես ընկած է պետական ծառայողների պարգևատրումը, այնուամենայնիվ, որոշմամբ սահմանված է պետական ծառայողների, այդ թվում հարկային ծառայողների, գնահատման նպատակով կիրառվող գնահատականների որոշման հատուկ սանդղակ: Ավելին, որոշմամբ նախատեսվում է պետական ծառայողների գնահատման նպատակով գնահատել ինչպես նրանց կողմից իրենց աշխատանքային ծրագրերի կատարումը, այնպես էլ պետական ծառայողների կառավարչական հմտությունները[4]: Առաջին հայացքից կատարյալ գնահատման համակարգ թվացող այս որոշման արդյունավետությունը իրականում հավասար է զրոյի: Այլ կեպ ասած, իրականում այս որոշման իրականացումը կրում է ձևական բնույթ: Պատճառն այն է, որ մի կողմից աշխատանքային ծրագրերի կազմման ժամանակ, որպես կատարվելիք միջոցառումներ նշվում են հարկային վերադաս մարմնի կողմից հաստատված պաշտոնի նկարագրերով սահմանված գործառույթները, որոնց մի մասը հարկային ծառայողների կողմից իրականում չեն իրականացվում կամ

[4] ՀՀ կառավարության 20.10.2011թ.-ի N 1510-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականի գնահատման և կատարողականի հիման վրա պարգևատրման կարգը հաստատելու մասին»

դրանք իրականացվում են ոչ բոլոր ծառայողների կողմից: Մյուս կողմից, չնայած հարկային ծառայողների որոշ մասը փաստացի չի տիրապետում պաշտոնի նկարագրով իրենց վերապահված գործառույթներին կամ դրանց տիրապետում է ոչ լիարժեք, այնուամենայնիվ անհայտ պատճառներով գրեթե ամբողջ անձնակազմը ստանում է միևնույն բարձր գնահատականը՝ չնչին միավորների շեղումներով: Տպավորություն է ստացվում, որ հարկային ծառայողների կողմից իրենց գործառույթները իրականացվում են անթերի և անվերապահորեն, սակայն սա այն պարագայում, երբ ստվերային տնտեսությունը էական կրճատում չի ունենում: Իրավիճակը նույնատիպ է կառավարչական հմտությունների գնահատման ժամանակ: Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ գնահատման այս համակարգը, որը նպատակ ունի աշխատողներին պարգևատրելու միջոցով խրախուսել պետական աշխատողներին և նպաստել աշխատանքի արտադրողականության և արդյունավետության բարձրացմանը, իրականում ոչ միայն չի նպաստում աշխատանքի արտադրողականության բարձրացմանը, այլև կեղծ տվյալներ է պարունակում և պայմաններ է ստեղծում ստվերային տնտեսության էլ ավելի մեծացման համար: Քանզի, եթե պետական ծառայողը ականատես է լինում ու քաջ գիտակցում է, որ թե՛ աշխատելու և թե՛ չաշխատելու պարագայում միևնույն է կարող է ստանալ բարձր գնահատական ու արժանանա խրախուսման, ապա ոչ մի ջանք չի կիրառի իր աշխատանքի արտադրողականությունը և պետական կառավարման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Ավելին, երբ աշխատանքից ազատման ժամանակ ձևական գնահատականները հիմք չեն հանդիսանում, և աշխատանքից ազատումները կրում են սուբյեկտիվ բնույթ, ապա պետական կառավարման արդյունավետության մասին խոսելն իսկ դառնում է ավելորդ: Ընդ որում այս խնդիրը համակարգային է և վերաբերվում է ոչ միայն ստորին մակարդակի աշխատողներին, այլ նաև բարձր հարթության ղեկավարներին: Ավելին, այս հիմնախնդիրը կարևորագույն դեր ունի ՀՀ հարկային քաղաքականության իրականացման գործում և լուրջ ազդեցություն ունի պետական կառավարման արդյունավետությունը գնահատելիս: Ահա թե ինչու հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման տեսանկյունից կարևորում ենք հարկային մարմնի և հատկապես հարկային քաղաքականություն իրակա-

նացնող պետական ծառայողների գործառույթների գնահատման արդյունավետ համակարգի ներդրումը: Ավելին, կարծում ենք, որ հարկային մարմնի գործառույթների արդյունավետ գնահատման համակարգը այն բանալի գործոնն է, որի միջոցով հարկահավաքման գործընթացը կդառնա ավելի արդյունավետ:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրություն
2. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 27.06.2016թ.-ի 97-Ա հրաման՝ «ՀՀ ԿԱ ՊԵԿ զարգացման և խրախուսման ֆոնդի միջոցների հաշվին պարգևատրման գումարների բաշխման նպատակով հարկային (տարածքային) տեսչությունների աշխատանքների գնահատման ցուցանիշները և կարգը հաստատելու մասին»
3. ՀՀ կառավարության 20.10.2011թ.-ի N 1510-Ն որոշում՝ «Հայաստանի Հանրապետության պետական իշխանության մարմիններում աշխատանքային ծրագրերի կազմման, էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ աշխատանքային ծրագրերի մուտքագրման, հաստատման, այդ համակարգով կատարողականի գնահատման և կատարողականի հիման վրա պարգևատրման կարգը հաստատելու մասին»

THE ROLE OF ASSESSMENT OF THE TAX SERVICE'S FUNCTIONS IN TAX POLICY IN REPUBLIC OF ARMENIA

Mher Frangulyan
EU, Chair of Economics and Management, Researcher

The effectiveness of tax policy in Armenia directly depends on reduction of the shadow economy in Armenia. From this point of view, the tax system of Republic of Armenia needs high qualified and highly trained staff, both in the management of the lower and higher dimensions. Additionally, in order to achieve this goal it is necessary to formulate a

flexible and effective system of assessment of tax servants, which will allow evaluating the effectiveness of each function and method implemented by the tax authority. Only impartial and objective assessment of the functions of the tax collection can reveal all the obstacles and opportunities available in the tax policy area and it can elaborate actions to eliminate negative phenomena and to implement a tax policy mission.

Keywords: tax policy, tax authority, tax incomes, tax servants, the system of assessment, shadow economy, the effectiveness of tax policy.

РОЛЬ ОЦЕНКИ ФУНКЦИИ НАЛОГОВОЙ СИСТЕМЫ В НАЛОГОВОЙ ПОЛИТИКЕ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

Мгер Франгулян
ЕУ, кафедра Экономики и управления, соискатель

Эффективность налоговой политики в Армении напрямую зависит от сокращения теневой экономики в Армении. С этой точки зрения, налоговая система РА нуждается в высококачественном и высококвалифицированном персонале, как в управлении более низкими, так и более высокими измерениями. Более того, для достижения этой цели необходимо сформулировать гибкую и эффективную систему оценки налоговых служащих, которая позволит оценить эффективность каждой функции и метода, осуществляемых налоговым органом. Только равноправная и объективная оценка функций сбора налогов может выявить все препятствия и возможности, доступные в области налоговой политики, и разработать меры по устранению негативных явлений и осуществлению миссии налоговой политики.

Ключевые слова*:* налоговая политика, налоговые органы, налоговые доходы, налоговые инспекторы, система оценки, теневая экономика, эффективность налоговой политики